

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 30.06.2011Թ. Ե ՂԵԳՆԱԶՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ
ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒ ԵԼՈՒՅԹԸ**

**ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալ- տնտեսական իրավիճակի և իրականացվող
ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ
Կառավարության հարգարժան անդամներ, նիստի հարգարժան մասնակիցներ
Մարզային իշխանությունների անունից ողջունում եմ Վայոց ձորի մարզում ՀՀ
կառավարության արտագնա նիստն անցկացնելու կապակցությամբ և օգտվելով ընձեռված
հնարավորությունից, ցանկանում եմ մինչ պաշտոնական թվերին անցնելը, նախ համառոտ
ներկայացնել Վայոց ձորի մարզպետարանի կողմից մարզում իրականացված ծրագրերի և
նախատեսվելիք միջոցառումների մասին:

Խորհրդակցելով մարզային և տեղական ինքնակառավարման իշխանությունների
ներկայացուցիչների հետ, որոշեցինք ստեղծել մարզի պատմամշակութային անցյալն ու
կենսագործունեության ոլորտները խորհրդանշող սիմվոլները՝ դրոշը, զինանշանը և
հիմնը: Հիմնն արդեն պատրաստ է, իսկ զինանշանի և դրոշի ձևավորման աշխատանքներն
ընթացքի մեջ են:

Մարզում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության
արդյունավետության բարձրացման ակնկալիքով, նախատեսել ենք տարեվերջյան
փոխադարձ գնահատումներ: Այսուհետ համայնքների ղեկավարների կողմից
կգնահատվեն համայնքներում մարզպետարանի աշխատակազմի վարչությունների
պետերի կատարած աշխատանքները, իսկ մարզպետի եւ նրա տեղակալների կողմից՝
համայնքների ղեկավարների գործունեությունը:

Ընթացիկ տարում իրականացված կարևորագույն ծրագրերից են Իրանի
Հանրապետության Խոյի նահանգի և Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի ու
Արխանգելսկի մարզերի հետ համագործակցության հաստատումը: Իհարկե արտաքին
կապերի հաստատման գործընթացը շարունակական է և հետագա համագործակցության
սպասվելիք դեռևս մի քանի ծրագրեր ևս կլինեն

Սերտ է համագործակցությունը նաև Վայոց ձորի մարզպետարանի և մարզի
տարածքում տեղակայված ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերի ու
մարզային զինկոմիսարիատների միջև՝ դպրոցականների զինվորական
պատրաստվածության, նախագորակոչային և զորակոչային տարիքի պատանիների հետ
տարվող աշխատանքների, զորակոչի կարգազրեքի իրականացման հարցերով: Նշեմ, որ
մարզպետարանի աշխատակազմի արական սեռի ներկայացուցիչները մասնակցում են
զորամասերում կազմակերպվող զենքի տիրապետման վարժանքներին:

Համագործակցությունը բարձր է գնահատվել ՀՀ ՊՆ –ի կողմից, որի արդյունքում ՀՀ
պաշտպանության նախարարի 2011 թվականի ապրիլի 21-ի »2010 թվականի աշնանային
զորակոչի կազմակերպման և անցկացմանը մասնակցած անձանց խրախուսման մասին«
հրամանով Վայոց ձորի մարզպետը պարգևատրվել է ՊՆ զինանշանով հուշանվերով՝
ոսկյա ժամացույցով:

Ուզում եմ խոսել նաև Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների հետ համագործակցության մասին: Ինչպես գիտեք Վայոց ձորի մարզից 5 պատգամավոր կան ԱԺ-ում, մեկը մեծամասնական ընտրակարգով և չորսը համամասնական ընտրակարգով ընտրված, որոնց հետ նույնպես մենք քննարկում ենք մարզին վերաբերող խնդիրներն ու գտնում հնարավոր լուծումները, ի նպաստ մարզի զարգացման ծրագրերի, ի բարօրություն մեր ժողովրդի:

Տեղին է նշել նաև մեր համագործակցությունը Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման միջազգային ծրագրի հետ, մարզում խաղողագործության և պտղաբուծության զարգացման նպատակով: Այս առումով ուզում եմ կարևորել նաև գյուղացու աշխատանքը գնահատելուն միտված գյուղատնտեսական արտադրանքի ցուցահանդես-տոնահանդեսների ավանդույթը՝ մարզում ամենամյա բերքի և գինու տոները, իսկ այս տարվանից մարզային միջոցառումների ցանկը կհամալրվի «Համայնքի օր» տոնակատարությամբ:

Կուզենայի տեղեկացնել, որ որոշել ենք դիմել ՀՀ ԿԲ -ին Վայոց ձորի մարզի սիմվոլներով մեդալներ պատվիրելու նպատակով:

Միջոցառումների ու տոնակատարությունների թվարկումից անցնենք զուտ թվային ու պաշտոնական հաշվետվության:

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից 2010 թվականին ստացվել է 12 միլիարդ դրամի համախառն արտադրանք, որը նախորդ տարվա նկատմամբ պակաս է 3.9 տոկոսով: Տարեկան միջին հաշվով արտադրվում է 4000 տոննա հացահատիկ, 3800 տոննա խաղող, 2600 տոննա պտուղ, 18000 տոննա կաթ, 5000 տոննա միս և այլն:

Չնայած ընթացիկ տարվա անբարենպաստ կլիմայական պայմաններին, գյուղացիական տնտեսությունների կողմից կաճեցվի հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի, համեմատաբար լավ բերք: Մշակաբույսերի սնուցման համար համայնքներին է տրվել 110 տոննա ազոտական պարարտանյութ և 20լ. ,, Ազոցեովիտ – 1 ,, կենսապարարտանյութ: Բույսերի պաշտպանության ծրագրով պետք է միջոցների հաշվին ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին տրվել է 150 կգ ցինկի ֆոսֆիդ որի շնորհիվ 10 համայնքներում 1200 հա -ի վրա կազմակերպվել են մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ :

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի թիվ 330-Ն և 2011թ. փետրվարի 17-ի 279-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի գարու արտադրության ավելացման, գարու սերմարտադրության զարգացման ծրագրերի շրջանակներում մարզի 14 համայնքների 303 շահառուների հատկացվել է 44 տ էլիտային և սոցիալական ուղղվածություն ունեցող 8 համայնքների 178 շահառուների 20 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու սերմացու: Մարզին հատկացվել է նաև 1 տոննա եզիպտացորենի սերմացու:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղացիական և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորվող վարկից հատկացվել է 187 մլն դրամ՝ 327 վարկառուի, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներին տրվել է նաև 126 մլն դրամ 225 վարկառուի:

Այս տարի կարկտահարությունից տուժել են մարզի 18 համայնքներ, ընդհանուր վնասը կազմել է 300 մլն. դրամ:

Գյուղատնտեսության բնագավառի այսօրվա դժվարությունները կապված են տեխնիկայի, պարարտանյութերի, սերմացուի պակասի, ինչպես նաև հումքի իրացման և վերամշակման հետ: Բավարար չափով լուծված են խաղողի բերքի մթերումների խնդիրները, սակայն նույնը չի կարելի ասել պտղի, բանջարեղենի, մսի, կաթի վերաբերյալ:

Ճիշտ է վերջին տարիներին ոռոգման համակարգերում կատարվել են մեծ ներդրումներ, սակայն բարձրադիր գոտու գյուղերի մեծ մասն արտադրություն են վարում անջրդի հողատարածքների վրա, որտեղից ստացվում է շատ ցածր արդյունք: Մեր կարծիքով խնդիրը հնարավոր է լուծել այդ գյուղերում՝ Խաչիկ, Բարձրունի, Ելփին կառուցելով փոքր ջրամբարներ:

„Հագարամյակի մարտահրավերներ,, ծրագրի շրջանակներում մարզի Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաշեն , Աղավանաձոր , Ռինդ և Խաչիկ համայնքներում ընթանում են ոռոգման ներքին ցանցերի նորոգման աշխատանքներ:

Մարզի տնտեսության մյուս ճյուղն արդյունաբերությունն է, որտեղ տարեկան արտադրվում է 5-5.5 միլիարդ դրամի համախառն արտադրանք, որի շուրջ 70 տոկոսը բաժին է ընկնում գինեգործությանն ու հանքային ջրերի շշալցմանը:

Մարզի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝

-Մարզի տնտեսության զարգացման համար դեռևս բավարար չեն կատարված ներդրումների ծավալները: Հրատապ խնդիր է մարզի միակ՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկումը:

-Մարզում դեռևս լիարժեքորեն չի գործում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության համակարգը, այն դեռևս չի հասնում մարզի բոլոր համայնքներին, ինչն իր հերթին չի խոչընդոտում է մարզի համայնքների համամասնական զարգացմանը: Խնդրի լուծմանը կարող է նպաստել երկարաժամկետ մատչելի վարկային միջոցների ներգրավումը, ինչպես նաև գրավախնդիրների լուծումը:

-Արդյունաբերության ոլորտում դեռևս չի ձևավորվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը, ցածր է մնում արտադրության արդյունավետության և տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը:

Մարզում գործում է 51 հանրակրթական դպրոց, այդ թվում 1 տարրական, 15 հիմնական և 35 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան, 3-ը ավագ դպրոց:

Դպրոցներում սովորում է 7333 աշակերտ, որոնք կոմպլեկտավորված են 515 դասարաններում: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 63 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Ջերմուկի ավագ դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար

Բոլոր դպրոցներն ունեն համակարգիչներ, իսկ 21 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ, որոնք օգտվում են ինտերնետ կապից: Համակարգիչներով դպրոցները համալրելու ծրագիրը շարունակվում է:

Մարզում գործում է համայնքային ենթակառուցվածքի 17 մանկապարտեզ, 790 երեխաներով: Ցավոք մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, ինչի հետևանքով այդ համայնքներում անլուծելի է մնում նախադպրոցական

կրթության, որպես միջնակարգ կրթության նախապատրաստման կարևորագույն օղակի, խնդիրը: Մեկնարկել է և սեպտեմբերի 1-ից կսկսվի գործել նախակրթարանների ստեղծման ծրագիրը՝ 22 համայնքներում:

Մարզի մշակութային և ստեղծագործական կուլեկտիվները հաջողությամբ մասնակցում են հանրապետական և մարզային մշակութային փառատոններին, մրցույթներին: Գործում է համայնքային ենթակայության 46 գրադարան, 31 մշակույթի տուն, 4 արվեստի, 1 գեղարվեստի և 1 երաժշտական դպրոց, 2 թանգարան, 2 մանկական ստեղծագործական կենտրոններ, պատկերասրահի 2 մասնաճյուղ:

Մշակութային կյանքից ետ չեն մնում սպորտի ու երիտասարդության հետ տարվող աշխատանքները:

Մեծ ուշադրություն է դարձվում ազգաբնակչության առողջության պահպանման աշխատանքների կազմակերպմանը: Բնակչության ստացիոնար բուժօգնությունը հիմնականում իրականացվում է “Եղեգնաձորի ԲԿ”, “Վայքի ԲՄ” և “Ջերմուկի ԱԿ” ՓԲԸ-ների հիվանդանոցներում: Տարեց-տարի ավելանում է հիվանդանոց դիմողների թիվը, որը հիմնականում պայմանավորված է նորագույն բժշկական տեխնոլոգիաների կիրառմամբ և մասնագետների որակավորման բարձրացմամբ: 2010թ. համեմատ բուժհիմնարկների գլոբալ բյուջեն 2011 թվականին աճել է 22.0%-ով և կազմում է 512.8 մլն. դրամ:

2011թ. հունվար-մայիս ամիսներին մարզում ծնվել են 198 և մահացել 134 մարդ, նշված ցուցանիշների արդյունքում բնական աճը կազմել է 64 մարդ:

Իհարկե առողջապահության բնագավառում դեռևս կան չլուծված խնդիրներ, կապված՝ կադրերի, ժամանակակից բուժ. սարքավորումների, շտապ օգնության մեքենաների պահանջի հետ:

Անցած հինգ ամիսների ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել մարզի ազգաբնակչության սոցիալական ապահովության բարելավման ուղղությամբ:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալական հիմնախնդիրների լուծումը:

Սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններում փաստագրվել է 930 ընտանիք, որից նպաստառու է դարձել 701-ը: 2011թ. հունիսի 1-ի դրությամբ նպաստառու ընտանիքների թիվը պակասել է 95-ով:

Մարզում գործազրկության ցուցանիշը զգալիորեն բարձր է, որպես աշխատանք փնտրողներ գրանցվել են 1323 անձինք, որից գործազուրկ են 876-ը:

Մարզում հաշվառված են 10243 կենսաթոշակառուներ, ամսական միջին թոշակի չափը կազմել է 28.3 հազ. դրամ:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, Արցախյան պատերազմում զոհված, հաշմանդամ դարձած և դժվարին պայմաններում ապրող ընտանիքների սոցիալական աջակցության խնդիրները: Անցած հինգ ամիսների ընթացքում մարզպետի մոտ ընդունելության եկած և վերադաս մարմիններին դիմած 380 քաղաքացիների հատկացվել է 8410.0 հազար դրամի ֆինանսական օգնություն:

Մարզի սոցիալ- տնտեսական զարգացման գործում կարևոր նշանակություն ունեն իրականացվող ծրագրերը:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108 - Ն որոշման համաձայն Վայոց ձորի մարզին հրատապ ծրագրով հատկացվել է 260.0 մլն.դրամ, որը նպատակուղղվել է բազմաբնակարան շենքերի, դպրոցների տանիքների վերանորոգմանը, Ջերմուկի քաղաքային գրադարանի վերանորոգմանը, Եղեգնաձոր և Վայք քաղաքների փողոցների առանձին հատվածների վերանորոգմանը: Պետական բյուջեով հատկացված 450 մլն. դրամը հիմնականում նպատակուղղվել է դպրոցաշինությանը և մշակույթային օբյեկտների հիմնանորոգմանը

Եղեգնաձոր քաղաքում հաշվառված է (Միկոյան-16) ամրացման- վերականգնման կարիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենք, որը ունի 3 աստիճանի վթարայնություն: Վերջին տարիներին ցնցումների հետևանքով շենքի տեխնիկական վիճակը ավելի է վատացել և բնակչության համար դարձել խիստ վտանգավոր :

Մարզում առկա է 4-րդ աստիճանի 213 և 3-րդ աստիճանի 216 անհատական բնակելի տներ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ ուսումնասիրվել է մարզի տարածքում սողանքային և քարափլուզման երևույթների վիճակը, աշխատանքներ են տարվում նման երևույթների կանխարգելման, բնակիչների տարահանման կազմակերպման ուղղությամբ :

Սողանքային երևույթները առավել արտացոլված են՝ Չիվա, Մարտիրոս , Ագարակաձոր գյուղերում , քարաթափումները՝ Շատին, Արտաբույնք և Գետափ գյուղերում :

2011թ. ՀՀ պետական բյուջեի հաշվին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվող շինարարական ծրագրեր են՝ դեպի Հորս գյուղը տանող 2.8 կմ հանրապետական նշանակության ճանապարհի հիմնանորոգումը -458.3 մլն. դրամ, դեպի Քարագլուխ գյուղը տանող 1.0 կմ հանրապետական նշանակության ճանապարհի հիմնանորոգումը -160.7 մլն. դրամ:

Գարնանային անձրևաջրերից առաջացած սելավների հետևանքով վթարվել են միջպետական և հանրապետական նշանակության մի շարք ճանապարհներ:

Հատկապես ուշագրավ է Շատին-Գողթանիկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 0.9 կմ հատվածը, այն փլուզվել է, որի պատճառով դադարեցվել է երթևեկությունը: Մարզպետարանի կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ կառուցվել է 2.3 կմ շրջանցող ճանապարհ, որը թեև դժվար երթևեկելի է, բայց ժամանակավորապես ապահովում է կապը 7 համայնքների հետ:

Վթարված կամուրջների և ճանապարհների վերականգնման համար կազմվում են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր առաջիկայում վերականգնելու համար:

“Ասիական զարգացման բանկի” ֆինանսավորմամբ 2010 թվականին սկսվել և այժմ էլ շարունակվում են Շատին, Գետափ, Մալիշկա, Գոմք, Նոր Ագնաբերդ գյուղերի և Եղեգնաձոր քաղաքի խմելու ջրի ներքին ցանցերի վերանորոգման աշխատանքները:

Գյուղական համայնքներում խմելու ջրի արտաքին ցանցերը 90%-ով հիմնանորոգված են, իսկ ներքին ցանցերը հիմնականում գտնվում են ֆիզիկապես մաշված վիճակում, որը պատճառ է դառնում ջրի կորստի և որակական հատկանիշների վատթարացմանը :

Ջերմուկ քաղաքի կոյուղու մաքրման կայանի (կոլեկտորի) կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են :

2011 թվականին Աղավնաձոր և Արփի համայնքներում շարունակվում են գազաֆիկացման աշխատանքները:

Մարզում իրականացվող ծրագրերի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքների զարգացման քառամյա ծրագրերը, որոնցում արտացոլվել են համայնքներում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները:

Համայնքների զարգացման ծրագրերի վերլուծությունից պարզվում է, որ դրանցում հիմնականում ներառված են համայնքների համար առաջնահերթ կարևորություն ունեցող սոցիալ - տնտեսական խնդիրներ՝ մանկապարտեզի շենքերի, առողջապահական հիմնարկների, մշակույթի տների, ճանապարհների վերանորոգման, գազաֆիկացման աշխատանքներ:

2011թ.-ին մարզի 44 համայնքներում 5 ամսվա կտրվածքով տեղական բյուջեներով նախատեսվել են 416162.0 հազ.դրամի եկամուտներ: Բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 405788.8 հազ.դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է՝ 98.0 %-ով, որից սեփական եկամուտների գծով՝ 97.9 %-ով:

- Հողի հարկ՝ նախատեսվել է 31502.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 32398.0 հազ.դրամ, կամ հավաքագրումը կատարվել է 102.8 %-ով:

- Գույքահարկ՝ նախատեսվել է 35423.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 39281.0 հազ.դրամ, կամ հավաքագրումը կատարվել է 110.9 %-ով:

Մարզպետարանի աշխատակիցները պարբերաբար այցելություններ են կատարում մարզի համայնքներ՝ համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ ազգաբնակչության հետ: Հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերը տարանջատվել են ըստ պետական կառավարման ոլորտի և տեղական ինքնակառավարման ոլորտի շրջանակներում լուծվող հարցերի: Համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվում հիմնախնդիրներին լուծում տալու ուղղությամբ:

Մեծարգո պարոն Վարչապետ, Կառավարության հարգելի անդամներ, հյուրեր:

ՀՀ Կառավարության կողմից մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նկատմամբ առանձնահատուկ ուշադրությունը և ընդունված որոշումները լուրջ խթան կհանդիսանան մարզի տնտեսական վերելքի, աշխատատեղերի ստեղծման, ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավման, մշակութային կյանքի աշխուժացման ու սոցիալական լարվածության մեղմացման ուղղությամբ:

Որպես Վայոց ձորի մարզպետ, մարզի ողջ ազգաբնակչության անունից իմ խորին երախտագիտությունն ու գոհունակությունն եմ հայտնում ՀՀ Նախագահին, ՀՀ Վարչապետին և ՀՀ Կառավարությանը արտագնա նիստը Եղեգնաձորում կազմակերպելու, մարզի հիմնախնդիրներին մանրակրկիտ ծանոթանալու և լուծման ուղիներ առաջարկելու համար:

Շնորհակալություն ուշադրության համար: